



ք. Երևան

11.12.2006թ.

**ՀՖՖ Նախագահի ծրագրային հայտարարությունը  
2007/2008 թվականների Արտոնագրման մրցաշրջանի համար**

**Հարգելի տիկնայք եւ պարոնայք**

Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան սկսում է ակումբների արտոնագրման գործընթացը ՈԻԵՖԱ-ի 2007/2008 թվականների մրցաշրջանի համար: Ինչպես եւ նախորդում, այս մրցաշրջանում նույնպես, արտոնագրման ընթացակարգեր կանցնեն ՀՀ բարձրագույն խմբի թիմերի բոլոր մայր-ակումբները:

Մա ակումբների արտոնագրման արդեն չորրորդ մրցաշրջանն է: Նախորդների ընթացքում ձեռք բերված փորձն ու գիտելիքները թույլ են տալիս ասելու, որ ՈԻԵՖԱ-ի կողմից ստեղծված այս ծրագիրն ապացուցել է իր կենսունակությունը նաեւ հայկական ֆուտբոլում, քանի որ արտոնագրման սկզբունքային պահանջները մեր ակումբների կողմից հիմնականում կատարվում են՝ առանց հարուցելու վերջիններիս անբարյացակամությունն, ինչպես սկզբնական շրջանում, եւ դա վկայում է, որ արդեն իսկ այսօր մեր ֆուտբոլը՝ եթե ոչ իր խաղային մակարդակով, ապա ենթակառուցվածքային եւ կազմակերպչական առումով կարող է համապատասխանել եվրոպական չափորոշիչներին, ինչը լրացուցիչ հեղինակություն է հաղորդում հայկական ֆուտբոլին միջազգային կառույցներում:

Արտոնագրման համակարգի շնորհիվ անցած մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ-ն եւ ակումբներն ավելի լավ են ճանաչել միմյանց: Դա օգնել է մեր ֆուտբոլային գերատեսչությանը՝ հնարավորինս օգտակար լինել ակումբներին՝ նրանց առջեւ ծառայած խնդիրների լուծման գործում: Հատկապես այն խնդիրների, որոնք վերաբերվում են մանկապատանեկան ֆուտբոլին, կադրային եւ ենթակառուցվածքային հարցերին, անգամ՝ ֆինանսներին: Այդ աշխատանքները, ինչպես եւ արտոնագրման համակարգը, շարունակական բնույթ են կրում եւ պահանջում են պրոֆեսիոնալ ու համբերատար մոտեցում շահագրգիռ բոլոր կողմերից:

Անցած մրցաշրջանի ընթացքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք հետագայում միայն կազդեն արտոնագրման համակարգի գործունեության վրա: ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից սկսվեցին ՈՒԵՖԱ-ի նոր Ուղեցույցի (տարբերակ 2.0) տեղայնացման աշխատանքները, որոնք հաջողությամբ պսակվեցին: Ս.թ. նոյեմբերի 14-ին ՈՒԵՖԱ-ի Գործադիր կոմիտեն հաստատեց այն 1 (մեկ) տարի ժամկետով:

Չնայած ՀՖՖ նոր Ուղեցույցի նորացված պահանջները կկիրառվեն 2008/2009թթ. մրցաշրջանից, սակայն դրանց մի մասը գալիք մրցաշրջանում արդեն կդրվի կիրառության: Այդ չափորոշիչները որոշակիորեն բարդեցված են, բայց ինչպես նախորդ մրցաշրջաններում, այս մեկում նույնպես, ակումբները կարող են ակնկալել ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետների ակտիվ օժանդակությունը, ինչը հենց նրանց պարտականությունն է: Ս.թ. հոկտեմբերին ՈՒԵՖԱ-ն իր անդամ-ֆեդերացիաների ուշադրությանը ներկայացրեց նաև նորացված Ստանդարտը, որով բոլոր ֆեդերացիաները (արտոնագրողները) պետք է ծավալեն իրենց գործունեությունը: Ի տարբերություն նախորդի, որը հիմնված էր միջազգային ISO-9000 ստանդարտի վրա, այս մեկի հիմքում դրված է ISO-9001:2000 ստանդարտը: Իսկ դա նշանակում է, որ ոչ միայն մեր ակումբները, այլ նաև ՀՖՖ-ն եւ նրա Արտոնագրման բաժինը պետք է համապատասխանեն համաեվրոպական չափորոշիչներին:

ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգ ներգրավված աշխատակիցները քաջածանոթ են ՀՖՖ ծրագրային քաղաքականություններին, եւ իրենք էլ դրա իրագործողներից են: Իսկ ՀՖՖ-ի քաղաքականությունն ամփոփվում է հայկական ֆուտբոլի շարունակական զարգացման գաղափարախոսությունում, որն իր մեջ ներառում է հետեւյալ միջոցները.

- խորապես մտածված եւ հեռանկարային գործողությունների իրականացում
- ենթակառուցվածքների կառուցում եւ բարելավում
- մանկապատանեկան ֆուտբոլի զարգացում
- տաղանդաշատ ֆուտբոլիստների ընդգրկում միջազգային տրանսֆերային հեղինակավոր շուկաներում
- բարձրակարգ եւ որակյալ մարզիչների ներգրավում իրականացվող աշխատանքներում
- ֆուտբոլի զարգացմանն ուղղված ֆինանսական ներդրումների ապահովում, աճ եւ ֆինանսական հոսքերի թափանցիկություն
- ներֆուտբոլային կյանքի կանոնակարգվածություն եւ կարգապահություն

Այս համակարգի շրջանակներում ՀՖՖ ղեկավարությունը հետեւյալ նպատակային խնդիրներն է դնում իր ակումբների արտոնագրման համակարգի առջեւ.

- Օժանդակում ֆուտբոլային ակումբներին՝ ՀՖՖ նոր Ուղեցույցի պահանջների կատարման հարցում, ինչը թույլ կտա նրանց մասնակցել ՈՒԵՖԱ-ի պաշտոնական ակումբային մրցաշարերին, իսկ 2008թ. նաև ՀՀ բարձրագույն խմբի ազգային առաջնությանը
- Շարունակական օժանդակում ֆուտբոլային ակումբներին՝ նրանց կադրային եւ վարչական հարցերում
- ՀՀ ֆուտբոլային մարզակառույցների արդիականացում՝ դարձնելով դրանք հնարավորինս հարմարավետ եւ անվտանգ
- փորձառու եւ երիտասարդ տաղանդաշատ կադրերի ներգրավվում արտոնագրման համակարգ՝ վերջինիս նոր լիցքեր հաղորդելու համար
- ՈՒԵՖԱ-ի նոր Ստանդարտի (տարբերակ 2.0) պահանջների կատարում եւ հաջող մասնակցություն 2007թ. հավաստագրային ընթացակարգին
- նախապատրաստական աշխատանքներ՝ 2008թ. ISO 9001:2000 հավաստագիր ստանալու համար
- ԶԼՄ-ներում արտոնագրման համակարգի, նրա խնդիրների եւ նպատակների ավելի լայնածավալ լուսաբանում
- հանդիպումներ ՏԻՄ ներկայացուցիչների հետ՝ մարզային ֆուտբոլի զարգացման եւ ՀՖՖ-ի հետ կապերի ամրապնդման համար

Չնայած բազմաթիվ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բարդությունների, մենք կարողացել ենք ստեղծել եւ զարգացնել արտոնագրման համակարգը, դարձնելով այն լիարժեք գործող մարմին: Այն եւս շարունակական դարձնելու նպատակով ես ակնկալում եմ ձեր բեղմնավոր եւ ակտիվ մասնակցությունն իրականացվող աշխատանքներին՝ ի շահ Հայկական Ֆուտբոլային Ընտանիքի:

**ՀՖՖ Նախագահ՝**

**Ռ. Հայրապետյան**